## ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված և 1994 թվականի ապրիլի 20-ին ուժի մեջ մտած և 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի երկարաձգման մասին 1999 թվականի ապրիլի 2-ին Մոսկվայում ստորագրված և 2000 թվականի մարտի 22-ին ուժի մեջ մտած արձանագրության մասնակից պետությունները,

Պայմանագրի 9-րդ հոդվածին համապատասխան,

**պայմանավորվեցին ներքոնշյալի մասին.**

1. Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մասնակից պետությունները ձևավորում են Հավաքական անվտանգության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ կազմված մասնակից պետությունների ղեկավարներից կամ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարներից, եթե, համաձայն իրենց պետությունների օրենսդրությունների, իրենք իրավասու են որոշումներ կայացնել Խորհրդի իրավասության ներքո գտնվող հարցերի վերաբերյալ»:

բ) 6-րդ հոդվածի առաջին պարբերությունը «մասնակից պետությունների ղեկավարների» բառերից հետո լրացնել «կամ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների կողմից, եթե, համաձայն իրենց պետության օրենսդրության, իրենք օժտված են համապատասխան լիազորություններով» բառերով:

գ) եզրափակիչ հատվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն, որը պահվում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում»:

2. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած պետությունների՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Կատարված է Աստանա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 8-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Հայաստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Ղրղզստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Բելառուսի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Ռուսաստանի Դաշնության կողմից**
*/ստորագրություն/*

**Ղազախստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

**Տաջիկստանի Հանրապետության կողմից**
*/ստորագրություն/*

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն